

ՀԱՐՈՒԹ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Օրերի
իմաստա-
բանը

ԲԱՆԱՍԵՆԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՁԱԿ

ԵՐԵՎԱՆ
«ՅՈՒՆԵՏԻԿԱՆ ԳՐԱՆ»
1988

Ժողովածուն կազմեց, ծանոթագրեց և առաջարանը գրեց՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆԸ

Կոստանդյան Հ.

Կ=755 Օրերի իմաստությունը: Բանաստեղծություններ, արձակ էջեր և նամակներ.— Եր.: Սովետ. գրող, 1988, 282 էջ:

Ափսուրահայ գրող Հարութ Կոստանդյանի ժողովածուում գեղատեղի ունենում են բանաստեղծություններ, արձակ ստեղծագործություններ, և նամակներ: Կոստանդյանի երկերը Հայաստանում տպագրվում են առաջին անգամ:

4702080206 (127) 31—88
 705 (01) 88

ԳՄԴ 84 Հ Ս

ISBN 5—550—00037—7

© «Սովետական գրող», կազմելու, ծանոթագրելու, առաջարանի և ձևափորման համար

Անհեթեթ ու քնահան, երբեմն էլ զարմանալիորեն դաժան է հակառակորդ արվեստի և գրականության մեծերի հանդեպ: Դեռ ոչինչ, երբ ծնունդով ու գործով իսկապես մեծ բանաստեղծը անորոշ ժամանակով մատնվում է մոռացության, սակայն վերդվեցնող է, երբ մոռացված մեծի փոխարեն, նրա ծիրանիների տակ, հակառակորդ մեզ հռամցնում է կատարյալ միջակություններ, իսկ մեծերից մի քանիսն էլ, իրենց կենդանության օրոք, ասես գրագի բռնվելով կույր հակառակորդի հետ, անում են ամեն ինչ, որպեսզի հեռու մնան դյուրին ժողովրդականությունից, խուսափում են դառնալ ամբոխի սիրելին, օրվա հերոսը, մի ներկայացման համար բեմ ելած «մտերի տիբալիս»:

Բանաստեղծ Հարութ Կոստանդյանը* իր կենդանության օրոք արեց ամեն ինչ, որպեսզի հեռու մնա դյուրին փառքից, որպեսզի անմնացորդ նվիրվի պոեզիային. նրա կենցաղն ու ստեղծագործությունը, յուրաքանչյուր ֆայլն ու խոհրդ համակված են եղել մի՛ գաղափարով՝ շարունակ ձրգտել կատարելության և միշտ դժվարին ուղիներ ընտրել ար-

* Մեկել է 1909 թ. Նոր Հարայում: Նախնիները Պարսկաստան են եկել Հնդկաստանից: Ստացել է փայլուն կրթություն՝ անգլերենով և ֆրանսերենով: Կյանքի մեծ մասն ապրել է Զրանսիայում: Մահացել և թաղվել է Պրովանսի՝ Զրանսիայի հարավի, գյուղերից մեկում, 1978 թ.:

վեստում: Եվ զարմանալին այն է, որ, ականատեսների ու
ընկերների վկայությամբ, Հ. Կոստանդյանը եղել է մեծ
հմայֆի, խորունկ գիտելիքների տեր մի մարդ, իմաստուն
գրուցակից, մարդամոտ ու ընկերասեր, այսինքն՝ բնածին
տաղանդի ու փայլուն կրթության կողմին ունեցել է այն բոլոր
արժանիքները, որոնք, հարպիկ միջակությունները, բավա-
կան հմտորեն հմանակելով, իրենց կենդանության օրոք
արժանանում են դափնիների: Սակայն Հ. Կոստանդյանը ոչ
միայն առևտուր չի արել իր անժխտելի տաղանդներով, այլև
կյանքի վերջին երեսուն տարիներն ապրել է աչքից հեռու,
Ֆրանսիայի հարավի փոքրիկ ու համեստ գյուղերում, և ար-
հեստագործությամբ վաստակել իր կտոր հացը:

Սակայն միայն համեստ կենցաղը, մարդկային բյուրեղ-
յա նկարագիրը և անդիվանագետ նվիրումն է խանգարել
Հ. Կոստանդյանին՝ կենդանության օրոք գրավելու իր մե-
ծությանը վայել տեղ մեր և համաշխարհային պոեզիայում:
Ըստ երևույթին ոչ միայն, քանզի Կոստանդյան-մարդն իր
նկարագրով ու կենցաղով զարմանալիորեն ներդաշնակ ու
միաձույլ էր Կոստանդյան-բանաստեղծին: Եվ նրա մոռաց-
ված, որոշ չափով անուշադրության մատնված մեծության
գաղտնիքը կգտնենք ավելի շատ նրա պոեզիայում: Նրա
բանաստեղծությունը ներկայացնում է զարմանալի մի հա-
կասություն՝ մատչելիության, միաժամանակ անհասանելիու-
թյան: Ոչինչ փակ չէ նրա բանաստեղծություններում, չկա
ոչ մի խրթին, գլուխկոտրելիք ոչ մի տող, մինչդեռ դյուրին
չեն այդ տողերը, անցողիկ ու հմայիչ երգի պես չեն գալիս
ու փակչում սկանջին, այլ պահանջում են մտքի և ոգու
բարձրաթոփ լինակ, ներքին հարստություն, հոգու վեհացում:
Սա այն լեռնագագաթն է, որ տեսանելի է բոլորին, որի
համփան փակ չէ ոչ մեկի առջև, սակայն ջանքեր ու խիզա-
խություն է պետք այնտեղ բարձրանալու համար:

Հարուր Կոստանդյանի պոեզիան ընթերցողին մղում է
հոգեկան կատարելության, նշանակում է բախումի մեջ է
մտնում ընթերցողի հնարավոր անոգեղենության, սահմանա-
փակ նաշակի և կարողությունների հետ: Միայն հոգով գո-
րեղը կարող է ընդունել այս մարտահրավերը և ընդունել
բանաստեղծի մեծությունը: Իսկ այդպիսի ընթերցողները,

սովորաբար, փոքրաքիվ են լինում, նրանք պատկանում են վաղվա օրվան, ուստի եղանակ ստեղծել շեն կարող են երկայում, բայց կարող են բանաստեղծի պես ասել. «Ես նաշակել եմ ապագան» («Եվ ի՞նչ համար...»): Ինքը՝ բանաստեղծը, դաժանության հասնող խստությամբ է բնեկ սեփական ստեղծագործությունները: Իր մասին գրում էր, որ ինքը «դանդաղորեն, հիգով աշխատողներից» է: Սակայն ծուլությունը չէր պատճառը: Ծուլ մարդը չէր կարող այդպիսի հսկայական գիտելիքների տեր դառնալ: «Պետք է գոնե մի վայրկյան եղած լինել գեղեցկությունը, որպեսզի կարելի լինի նրա ներկայությունը զգացնել», — գրում էր բանաստեղծն իր նամակներից մեկում (Բաբկեն Պողոսյանին, 17.12.47 թ.): Սա պարտեյանական մուսային սպասող բանաստեղծը չէ: «Գեղեցիկը լինելը» աստվածահայտնության այն եզակի պահն է, որին հասնելու համար ոգու երկարատև հսկում է պետք: Նշանակում է յուրաքանչյուր տողը գեղեցիկի «լինելության» վավերական արտահայտությունը պետք է լինի և, ամենակարևորը, բանաստեղծն ինքը պետք է ներհնապես համոզված լինի, որ հասունացել է գեղեցիկի հայտնության պահը: Բանաստեղծը խոսելով դիմակի մասին, գրում է, որ այն «...մեզանից դուրս իրականացած իսկությունն է մի վիճակի»: Դիմակը հակադրությունն է գեղեցիկի «լինելության», քանզի այնտեղ անձնական, անհատական վավերացում չկա, ներքին լարում, ոգու վեհացում պետք չէ այդ իսկությանը հաղորդակցվելու համար: «Մայեա» բանաստեղծության մեջ դիմակը նույնանում է շատավաճության հետ.

Գեղեցկության իբրև դիմակ միա՛կ դեմքին՝
 Որի ետին կա՛ բազմությունն աչս անանուն:

Ուրեմն գեղեցկությունը աստվածային վիճակը չէ, այլ պերսոնալ էֆֆիստենցիա, անհատական վիճակ, որ նվաճվում է սեփական գիտակցությամբ: Իր նամակներից մեկում բանաստեղծը գրում է. «Մի գործ իր բերած նորություններով ու գաղափարներով իսկ բննադատությունն է իր շարտահայտած ձևի և խորքի...»: Այսպիսով, բառ

բանաստեղծի, ստեղծագործական յուրաքանչյուր փաստը միաժամանակ իր հետ բերում է իր ֆնեությունն ու գնահատությունը, այսինքն՝ բանաստեղծությունն ավարտված ու փակ միավոր չէ, այն ինքն իր մեջ կրում է անվերջ արարումը, կատարյալի հայտնագործումը: Այս երևույթը գուցե ավելի հստակ պատկերացնենք, եթե նամակում արտահայտված մտքի իրագործումը փնտրենք Հ. Կոստանդյանի բանաստեղծություններում: «Ներհուն մարմինն է փառահեղ...» բանաստեղծության մեջ գրում է.

Քանզի ամեն մի մասձում
Որոճում է նշմարագույն պատկեր ու ձև՝
Եվ գաել է վազրը՝ ժանիֆ.
Եվ գաել է յոչունը՝ թև—
Անկարելին անբաղձալին է արգարև.
Եվ ամեն ինչ մի ցանկություն՝
Ոնջունում է իր գաղանիքը հայտնող մի ձև...

«Ռադունիքը» հայտնող մի անբերի ձև է մաքրը՝ նրա «մարմինն... փառահեղ», ուր գեղեցիկի ներքին ձգտումը ստացել է իր արտաքին արտահայտությունը: Հ. Կոստանդյանի բանաստեղծությունները շարունակ ձգտում են այս համերաշխության, որպեսզի ինքը բանաստեղծությունը, տողը, բառը դառնան «գաղանիքի» հայտնման ձև: Պոեզիան ինքը իր բացառությունն է, պատճառը նույնանում է հետևանքի հետ, ասես ստեղծվում է այնպիսի փոխհարաբերություն, ուր «գաղանիքը» և «ձևը» ձգտում են միասնության: Այդպիսի միասնության օրինակ է մաքրկային մարմինը. «Մարմինն հավետ երջանկաձև» («Պատվանդան»): Եթե բանաստեղծության պարագայում «ձև» բառին զուգորդել է «գաղանիքը», ապա այստեղ բառաբարդվում է «երջանկությունը».

Ձի մաղուց էր մարմինը դաշն
Ու կատարյալ մի կաղապար՝
Ուր ինքն էր լոկ երջանկաձև
Ներկայություն ու գաղափար.

Սակայն բանաստեղծն այդ «դաշն» մարմինը համարում է «կաղապար», այսինքն՝ մի անոթ, որը պիտի լցվի գեղե-

ցիկով ու կատարյալով, «երջանիկ» ձեռն պետք է նաև նույն-
 պիսի ներքին: Սա ձգտում է, պահանջ և ոչ բախումի առիթ:
 Այստեղ դրամատիզմ չկա: Պետք է պարզապես կատարյալի
 պահանջը լինի, մինչդեռ դրամատիկն ու ողբերգականը
 կծնվեն գեղեցիկի և բարու պարտության կամ անկարելիու-
 թյան պայմաններում: Հ. Կոստանդյանի պոեզիայում այս
 կատեգորիաների բացակայությունը կամ կորուստը չկա,
 ինչպես չկա հող ողբերգականի համար, ֆանգի, ինչպես տե-
 սանք, «անկարելին անբաղձալին է արդարև»: Երազր և
 ձգտումն, ըստ բանաստեղծի, հավասարազոր են իրականու-
 թյան, գուցե՛ մարդը կա այնքանով, որքանով կարող է
 երազել:

Ապրելով 30—40 թվականների Փարիզի արվեստի և գրա-
 կանության նորությունների մթնոլորտում, Հ. Կոստանդյանի
 հայացքն ավելի շատ ուղղված է եղել դեպի բանաստեղծու-
 թյան ումսունտիկ շրջանը: Իր հարցազրույցի մեջ նա տալիս
 է Վ. Հյուգոյի, Ա. Լամարտինի, Ա. Մյուսսեի, Շելլիի, Կիտսի,
 Բայրոնի և Բրաունինգի անունները, միաժամանակ նշելով,
 որ «այդ շրջանին ազդեցությունը գալիս էր մասնավորապես
 հայկական աղբյուրներից»: Հ. Կոստանդյանն էլ Կոստան
 Զարյանի պես հայերենը յուրացրել և գործածության լեզու է
 դարձրել անգլերենը և ֆրանսերենը կատարելապես տիրա-
 պետելուց հետո: Սակայն, ի տարբերություն Կ. Զարյանի,
 իր գրական գործունեությունը շարունակել է բացառապես
 հայերենով: Բանաստեղծի նամակները կարդալով համոզ-
 վում ես, որ նա փառատեղյակ է եղել իր ժամանակի գրա-
 կան արդիական հոսանքներին և դպրոցներին, սակայն իր
 գրականության պոետիկան ամբողջովին կառուցված է դա-
 սական գրականության և ումանտիզմի ավանդների վրա:
 Սխալ կլիներ կարծել, թե սա պահպանողականություն կամ
 գրական հնադավանություն է: Ավելին՝ Հ. Կոստանդյանի
 պոեզիան սերտորեն առնչված է 30—40-ական թվական-
 ների եվրոպական բանաստեղծության կոնտեմպորին (Թ.—Ս.
 էլիոտ), իսկ նրա պոեզիայի ումանտիկականությունը զգա-
 յի չափով թելադրված է բանաստեղծի ազգային հակատա-
 գրով, սփյուռքի մշակութային բնօրինակուր իրավիճակով:

Ոգեղեն վերածննդի պահանջ էր դնում 30-ական թվականների ֆրանսահայ գրականությունը: Արշակ Չոպանյանը համոզված էր և փորձում էր գրական-մշակութային և ազգային-քաղաքականությունը դարձնել բնդհանուր ազգային և ազգային-քաղաքականության հիմք: Շահան Շահնուրեն իր «Ավագ Ուրբաթում» նոր արյուն էր պահանջում ժողովրդի համար, վազգեն Շոշանյանը գտնում էր, որ «խանդավառությունը ու ներհին կրակը ևս... իրականություն էն»: Այնուհետև, «Մթին պատանություն» վեպի հերոսներից մեկի բերանով ասում էր, որ «կարևորը միայն ապրիլը չէ, այլ մեծ ու թյա մ բ ապրիլը»: Նիկողոս Սարաֆյանը գրում էր.

Նոր, նոր է, նոր, որ տրվար
 Մեր առտունչներն հեղեղով, սիրո կարտան ողբերգական
 Չորգրանով, կարծր քար
 Կուրծիս տակ՝ կծրեիմ, զգվանենեկն վերջ այնքան,
 Ու կյանքին ձայնը կուգա
 Բջիջներև իմ բոլոր, ապրիլ, տեղ, տակավին:

2. Կոստանդյանը գրում էր այլեյի պարզ. «Մեր ժողովրդի ոսկին դարձել է կապար, նույնքան ծանրություն, բայց ոչ մի փայլ ու հանաչ, ոչ մի ժպիտ: Մենք պետք ունենք ալիսիազետների, մարդիկ, որ տարբարություն են և ոչ թե վերություն են մեր ժողովուրդը: Մարդիկ, որ կապարը դարձնեն դարձյալ ոսկի» (Բ. Թոփալյանին գրած նամակներից):

Եթե Ց. Դոստոևսկին համոզված էր, թե գեղեցկությունը կիրկի աշխարհը, ապա 2. Կոստանդյանը հավանաբար կարող էր ձգտել գեղեցիկով նպաստել ժողովրդի հոգևոր վերածննդին:

Վերև արդեն տեսանք, որ բանաստեղծը, թվարկելով անգլիական ու ֆրանսիական ոտանաթիղմի հանճարներին, իր ազգեցությունների ոլորտը նշտում էր «հայկական աղբյուրների» մեջ: Ըստ Երևույթին սա պետք է հասկանայ որպես հայկական ոգու ազգեցությունը բնդհանրապես, որպես խոր հավատ հայ հանճարի վերածնունդին, մանավանդ որ այդպիսի վերածնունդի պահանջ էր հկատվում սփյուռքահայ գրականության մեջ: Եվ հարկ է հկատել, որ թե 2. Կոստանդյանի, թե մյուսների ստեղծագործություններում այս

պահանջը լոկ խանդավառություն չէր, այլև բննադատական մտեցում անցյալի ազգային արժեքների հանդեպ, սրափ մի ծրագիր: «Հայկական ֆաղափակերթությունը» նոր է սկսել գեղջկական մշակույթից ձերբազատվել՝ հասնելու համար ֆաղափակերթության: Ես հավատում եմ Կ. Զարյանի այն խոսքին, թե շուտով Երևանը դառնալու է մեր «Արևիկը»:

Քանաստեղծի համոզմամբ ազգային ոգու վերածնունդը ինքնաբավ է փակ մի երևույթ չէ. ֆաղափակերթության շակերտված տեսակը տեսաում դառնում է բնորոշված: Այսինքն, ազգային զարթոնքը բանաստեղծը տեսնում է համաշխարհային մշակույթի ընդհանուր սիստեմի մեջ: Մանվանից երկու տարի առաջ, 1970 թ., Ն. Սարաֆյանն իր «Մշուշին մեջ» դեռևս անտիպ էսսեում այսպես պիտի բնորոշեր այդ երևույթը. «Տարիներ առաջ, Փարիզի տղաքը, խոսեցեցանք թե հայրենասիրությունը անհրաժեշտ բան մըն է պայմանավոր արվեստ ըլլա հայրենասիրությամբ երգվածին մեջ»:

Որոշ իմաստով սա նույնիսկ մարտահրավեր էր այդ օրերի եվրոպական արվեստին ու գրականությանը: Կոտրածներից ու ազգային ծանր կորուստներից հետո, տաղանդավոր երիտասարդների մի խումբ ուժ էին գտնում ստեղծելու մի գրականություն, որ ոչ միայն ազգային դիմագծով լինելու էր հայ գրականության տաղանդավոր ու հզոր դրսևորումներից, այլև եվրոպական իրականության ինքնատիպ մեկնաբանությունը՝ եվրոպական մի շարժ կարևոր դպրոցներին զուգահեռ և գուցե նրանցից էլ առաջ: Հ. Կոստանդյանի, Վ. Շուշանյանի, Շահան Շահնուրի կամ Ն. Սարաֆյանի գրականությունը մշակութային դիասպորայի այն բացառիկ երևույթներից է, որ մինչև այժմ արժանի գնահատություն չի ստացել և փաստորեն անհայտ է այն իրականության մեջ, որի բարձրարվեստ վերատեղծողն է եղել:

«Ես հավատում եմ, որ հայը, Արտավազդի պես, իր «ներքին Արարատների» անդունդների մեջ դեգերելուց վերջ, պիտի նվանի նաև գագաթն իր ներքին մեծության», — գրում էր Հ. Կոստանդյանն իր նամակներից մեկում: Արտավազդի կերպարը, ինչպես երևում է, մտահուգել է նաև նրան: Նամակից զատ, կարող ենք հիշատակել նաև «Արտավազդ» բանաստեղծությունը՝ առասպելի ընթերցումը որպես գեղար-